

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԸՆՏՐԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 15-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի, ինչպես նաև Պալատի նախագահի 03.06.2018թ. թիվ 173-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի 4.1 կետի պահանջներով,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ փաստաբանների ժողով (մարզի փաստաբանների համատեղ հավաք) հրավիրելու անհրաժեշտությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. **2018 թվականի հոկտեմբերի 13-ին** Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի համակարգողի ընտրության կապակցությամբ անցկացնել Տավուշի մարզի փաստաբանների ժողով (**այսուհետ՝ Ժողով**):

2. Սահմանել, որ՝

2.1. **թեկնածուների ինքնաառաջադրումը սկսվում է 2018 թվականի սեպտեմբերի 24-ից (սույն որոշման հրապարակման օրվանից) և ավարտվում է 2018 թվականի հոկտեմբերի 1-ին, ժամը 18:00-ին.**

2.2. **քարոզչությունը սկսվում է 2018 թվականի հոկտեմբերի 4-ից և ավարտվում է 2018 թվականի հոկտեմբերի 11-ին.**

2.3. **2018 թվականի հոկտեմբերի 12-ը համարվում է լռության օր.**

2.4. **Ժողովի քվեարկությունը սկսվում է 2018 թվականի հոկտեմբերի 13-ին, ժամը 11:30-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 12:30-ին:**

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝

- իրազեկել Տավուշի մարզի փաստաբաններին Պալատի ցուցակում գրանցված էլեկտրոնային փոստով ծանուցումն ուղարկելու և Պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան փողոց 7-2, 4-րդ հարկ) գտնվող համապատասխան ցուցատախտակի վրա հայտարարությունը փակցնելու միջոցով.

- սույն որոշման մասին իրազեկել մարզային խնդիրների համակարգման գծով Պալատի նախագահի տեղակալին.

24 սեպտեմբերի 2018թ.

թիվ 352-Լ

- մարզային հաշվիչ հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

4. Հաստատել Տավուշի մարզի փաստաբանների համատեղ հավաքի ծանուցման ձևը՝ համաձայն հավելվածի:


Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

24 սեպտեմբերի 2018թ.

թիվ 352-Լ

ք. Երևան



Հավելված
«Վաստաքաբանների պալատի նախագահի
24.09.2018թ. թիվ 352-Լ որոշման

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Տավուշի մարզում մարզային համակարգողի ընտրության համար փաստաբանների ժողով հրավիրելու մասին

ք. Երևան, Զաքյան 7-2

24.09.2018թ.

Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ 2018 թվականի հոկտեմբերի 13-ին, Տավուշի մարզի մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ Տավուշի մարզ, քաղաք Իջևան, Անկախության փողոց 16-19 հասցեում հրավիրվելու է Տավուշի մարզի փաստաբանների ժողով (մարզի փաստաբանների համարտեղ հավաք, այսուհետ՝ ժողով):

1. **Քվեարկությունը** սկսվում է 2018 թվականի հոկտեմբերի 13-ին, ժամը 11:30-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 12:30-ին:

2. **Թեկնածուների ինքնաառաջադրումը** սկսվում է 2018 թվականի սեպտեմբերի 24-ից և ավարտվում է 2018 թվականի հոկտեմբերի 1-ին, ժամը 18:00-ին:

3. **Քարոզչությունը** սկսվում է 2018 թվականի հոկտեմբերի 4-ից և ավարտվում է 2018 թվականի հոկտեմբերի 11-ին:

4. Յուրաքանչյուր մարզի փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**

5. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**

6. Քվեարկության գաղտնիությունը ընտրող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

Ինքնաառաջադրման վերաբերյալ դիմումը (**«Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի** 5.5 կետում նշված բովանդակությամբ) պետք է ներկայացվի ք.Երևան, Զաքյան 7-2 հասցեով՝ մարզային հաշվիչ հանձնաժողովին:

«Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգը և անհրաժեշտ այլ տեղեկությունները կարող եք ներբեռնել Պալատի www.advocates.am կայքէջից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմի ղեկավար